

1921 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՆԱԹԵԼԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

XX դ. հայոց պատմության կարևորագույն իրադարձություններից է 1921 թ. փետրվարյան ապստամբությունը, որի վերաբերյալ թեև ստեղծվել է քաղաքական, հրապարակախոսական ու գիտական հարուստ գրականություն, բայց չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ չկա այդ ապստամբությանն առնչվող գեթ մեկ հարց, որը արժանացած լինի միանման ու սպառնիչ գնահատականի: Եվ դա միանգամայն հասկանալի է, որովհետև այդ ապստամբությունը, լինելով երկու թշնամական կուսակցությունների հակընդդեմ գործունեության ծնունդ, բնականաբար, այդ կուսակցությունների ներկայացուցիչների կամ համախոհների կողմից ընկալվել ու մեկնաբանվել է հակադիր տեսանկյուններից: Այլ խոսքով ասած՝ զենքի հակադրությունը վերածվել է գրչի հակադրության և իրական մենամարտի փոխարեն շարունակվել գաղափարական-պատմագիտական մենամարտի տեսքով: Ընդ որում՝ բարիկադների տարբեր կողմերում գտնվող ուժերը, իրարից բաժանված լինելով մեծ տարածությամբ (ՀՅԴ-ն գտնվում էր վտարանդիության մեջ, իսկ Կոմկուսը բացարձակ մենատեր էր երկրի ներսում), նրանց գաղափարական փոխհրաձգությունը նմանվել է դատարկ կրակոցի. ոչ մեկը չի փորձել լսել մյուսի ասածը և ըստ այդմ՝ դույզն-իսկ փոխել իր տեսակետը կամ փորձել գտնել փոխզիջումային տարբերակ: Այժմ, երբ այլևս չկա նախկին խորհրդային բռնատիրությունը, և վաղուց վերացված է Կոմկուսի գաղափարական մենիշխանությունը, իսկ ՀՅԴ-ն ազատորեն գործում է նորանկախ Հայաստանի Հանրապետությունում, կարծում են, ժամանակն է վերանայելու խնդրո առարկա ապստամբության վերաբերյալ հայ պատմագիտության մեջ արտահայտված իրարամերժ տեսակետները և այդ ամենի քննական վերլուծության ճանապարհով ձևավորելու պատմագիտական ճիշտ պատկերացում մեր ժողովրդի պատմության այդ ողբերգական էջի մասին: Իսկ դրա լավագույն ճանապարհը, համոզված են, առկա տեսակետների անաչառ ներկայացումն ու քննական վերլուծությունն է, որը և կփորձենք իրականացնել սույն հոդվածում:

Նախ ասենք, որ 1921 թ. փետրվարյան ապստամբության պատմության ուսումնասիրության համար անչափ կարևոր են հատկապես ՀՀ ազգային արխիվի թիվ 37, 113, 114, 116, 201 և 1253 ֆոնդերի նյութերը: Դրանցից թիվ 37 ֆոնդի ցուցակ 1-ում ամփոփված են Հայրենիքի փրկության կոմիտեի վարած ներքին և արտաքին քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, հայտարարությունները, որոշումներն ու հրամանները, իսկ ցուցակ 2-ում՝ Էջմիածնի գավառի փրկության կոմիտեի գործունեությանը վերաբերող փաստաթղթերը:

Թիվ 113 ֆոնդում պահվում են Հայաստանի խորհրդայնացման մասին դեկլարացիան, Հայաստանի բուլշևիկյան կուսակցության և խորհրդային Հայաստանի ժողովրդային գործունեությանը վերաբերող նյութերը:

Թիվ 114 ֆոնդում հավաքված են խորհրդային Հայաստանի արտագործողական գործունեությանը վերաբերող փաստաթղթերը:

Թիվ 116 ֆոնդում ամփոփված են ՅՍԽՅ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի փաստաթղթերը, այդ թվում 1921 թ. հունվար-ապրիլ ամիսների իրադարձություններին վերաբերող նյութեր:

Թիվ 201 ֆոնդում, որն ըստ էության Հայաստանի առաջին Հանրապետության ներքին գործերի նախարարության ֆոնդն է, զետեղված են նաև դաշնակցական և թուրքական զինվորական կոմիսարների գրագրությունները:

Վերջապես, թիվ 1253 ֆոնդում ներկայացված են Հայաստանի հեղափոխական կոմիտեի գործունեությանը վերաբերող նյութերը, ի մասնավորի՝ նրա ընդունած դեկրետներն ու որոշումները:

1921 թ. փետրվարյան ապստամբության պատմությանը վերաբերող փաստական հարուստ նյութ է ամփոփված մի շարք ժողովածուներում¹:

Խնդրո առարկա պատմական իրադարձությունը լուսաբանելու տեսակետից շատ կարևոր են խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի պետական ու կուսակցական գործիչներ, այդ իրադարձությունների անմիջական մասնակիցներ ու զլխավոր դերակատարներ Գեորգի Չիչերինի, Սերգո Օրջոնիկիձեի, Սերգեյ Կիրովի, Ալեքսանդր Մյասնիկյանի, Սարգիս Կասյանի, Ասքանազ Մռավյանի, Սահակ Տեր-Պաբրիելյանի և Ալեքսանդր Բեկզադյանի հիշատակները, հեռագրերը, ճառերը, նամակները, զեկույցները, տարաբնույթ հոդվածներն ու ելույթները, որոնք հրատարակվել են նրանց երկերի ժողովածուներում Երևանում և Մոսկվայում²: Դրանցում հեղինակները, դեպքերի անմիջական տպավորությամբ, մասամբ փորձում են վերլուծել տեղի ունեցածը, բացահայտել հիմնական պատճառները՝ հարկավ դրսևորելով ակնհայտ կողմնակալ ու սուբյեկտիվ վերաբերմունք:

¹ Տե՛ս «Խորհրդային Հայաստանի հինգ տարին (1920-1925)», Եր., 1926, «Յուլետներից սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Եր., 1960, «Բ. Լեգրանի միսիան (փաստաթղթեր)», «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1967, թիվ 3, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.)», կազմողներ՝ Ջ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, Եր., 1972, «11-րդ Կարմիր բանակի մարտական ուղին Հայաստանում սովետական կարգերի հաստատման և ամրապնդման ժամանակաշրջանում. 1920 թ. մայիս-1921 թ. նոյեմբեր», փաստաթղթերի ժողովածու, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1978, թիվ 1, «ՀՀ Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», խմբագրմամբ Վ. Դազախեցյանի, Եր., 1999, «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов. Т. 1. М., 2002, т. 2, ч. 1, М., 2003, т. 2, ч. 2, М., 2005:

² Տե՛ս, օրինակ, **Գ. Օրջոնկիձե**, Ընտիր հոդվածներ ու ճառեր, Եր., 1950, **Ալ. Մյասնիկյան**, Ընտիր երկեր, Եր., 1957, **Կիրով Ս.** Избранные статьи и речи (1912-1934), М., 1957, **Չիչերին Գ.** Статьи и речи по вопросам международной политики. М., 1961, **Ա. Մռավյան**, Հոդվածներ և ճառեր. 1913-1929, Եր., 1961, **Ս. Կասյան**, Ընտիր երկեր, Եր., 1974, **Ս. Տեր-Պաբրիելյան**, Հոդվածներ, ճառեր, փաստաթղթեր, Եր., 1979, **Ալ. Բեկզադյան**, Նամակներ, Հոդվածներ, Փաստաթղթեր, Եր., 1981:

Սակայն, անկախ հեղինակների դրսևորած միակողմանի վերաբերմունքից, դրանք պարունակում են փաստական հարուստ տեղեկություններ ու առանձին մանրամասներ, որոնք կարոտ են գիտական անաչառ ուսումնասիրության ու գնահատության:

Սկզբնաղբյուրի արժեք ունեն մաս ապստամբությունից անմիջապես հետո այդ դեպքերը կոմունիստական դիրքերից վերլուծելու և գնահատելու առանձին գիտնականների փորձերը, որոնք նույնպես աչքի են ընկնում կողմնակալությամբ ու սուբյեկտիվությամբ: Ներկա դեպքում նկատի ունենք Ա. Կարինյանի և Ա. Յովհաննիսյանի 1920-ական թվականներին գրած աշխատությունները³:

Սկզբնաղբյուրների շարքում կարևոր արժեք ունեն մաս տրամագծորեն հակադիր դիրքերից հանդես եկած Հայաստանի առաջին Հանրապետության պետական այն գործիչների թողած հուշերն ու հրապարակած աշխատությունները, ովքեր, հանգամանքների բերումով գտնվելով դեպքերի հորձանուտում, մասնակցել են այդ ապստամբությանը, անմիջակամորեն ակամատես եղել իրադարձությունների զարգացման ընթացքին: Ինչպես և սպասելի էր, վերջիներս նույնպես աչքի են ընկնում կողմնապահությամբ ու սուբյեկտիվությամբ, միայն այն տարբերությամբ, որ երևույթները ընկալում ու ներկայացնում են բարիկաղների հակառակ կողմում մարտնչողների տեսանկյունից: Դրանք բոլորը, լինելով շատ կարևոր, բնականաբար, տարբերվում են իրենց արժանիքներով ու նշանակությամբ: Ըստ այդմ, հարկ ենք համարում հատուկ անդրադառնալ Հայաստանի առաջին Հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանի աշխատություններին, ի մասնավորի՝ «Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև» աշխատությանը՝ նվիրված 1918-1921 թթ. Հայաստանի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրության լուսաբանմանը. դրանում առանձնահատուկ տեղ է տրված մաս 1921 թ. փետրվարյան ապստամբության նկարագրությանը⁴: Փորձելով բացահայտել վերջինիս ծագման պատճառները՝ հեղինակը հիմնականում մեղադրում է Հայիեղկոմին, որը, նրա կարծիքով, իր ներքին ու արտաքին քաղաքականությամբ կարճագույն ժամանակահատվածում այնպես հիասթափեցրեց ժողովրդին, որ խորհրդային կարգերի հաստատումից դեռ երեք ամիս չանցած՝ լցվեց ժողովրդի համբերության բաժակը, և նա ստիպված եղավ զենք բարձրացնելու սեփական իշխանության դեմ: Փաստորեն Ս. Վրացյանի կարծիքով, փետրվարյան ապստամբությունը կրել է տարերային բնույթ և ծագել է որ-

³ Տե՛ս **Ա. Կարինյան**, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում և նրա դրդապատճառները, Եր., 1922, նույնի՝ Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը (փաստեր, դոկումենտներ), Եր., 1926, **Ա. Յովհաննիսյան**, Դաշնակցությունը և պատերազմը, Եր., 1924, նույնի՝ Համագգային կրիզիսը (Նոյեմբերյան հեղափոխության 5-րդ տարեդարձը), Եր., 1926:

⁴ Տե՛ս **Ալ. Խատիսյան**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, **Ս. Վրացյան**, Կեանքի ուղիներով. դեպքեր, դեմքեր, ապրումներ, հ. Ա և Զ, Գահիրե, 1955, Պեյրուք, 1967, նույնի՝ Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, նույնի՝ Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, Եր., 1993, **Իրազեկ**, Մօտիկ անցեալից, պատմական դեպքեր և ապրումներ 1917-1922, Պեյրուք, 1956, **Կ. Սասունի**, Փետրուարեան ապստամբութիւնը, Պեյրուք, 1970, **Յովհ. Քաջագունի**, Զ. 3. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Եր., 1994:

պես բուլշևիկների վարած հակաժողովրդական քաղաքականության օբյեկտիվ հետևանք՝ առանց նախապատրաստության ու արտաքին օգնության: Նա ծիծաղելի է համարում բուլշևիկների այն պնդումը, որ իբր փետրվարյան ապստամբությունը նախապատրաստվել էր դաշնակցության կողմից: Իր այդ տեսակետը հիմնավորում է այն բանով, որ ամիսներ առաջ իշխանությունը կամավոր ձևով բուլշևիկներին հանձնած դաշնակցությունը ստեղծված իրավիճակում չէր կարող հետապնդել իշխանությունը վերանվաճելու նպատակ, քանզի հակառակ դեպքում թույլ չէր տա, որ իր գործող ուժերը վաղորդք հեռանան կամ հեռացվեն Հայաստանից:

Մեզ հետաքրքրող իրադարձությունների լուսաբանման տեսակետից կարևոր են նաև նույն հեղինակի վերը նշված «Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ» բազմահատոր հուշագրության Ա և Ջ հատորները, որոնցում նա լայն պատմառի վրա ներկայացրել է Հայաստանում ծավալված քաղաքացիական կռիվները՝ հետաքրքիր մանրամասներ հայտնելով ընդհանրապես զանգեզուրյան իրադարձությունների և հատկապես բուն կռիվների մասին:

Փետրվարյան ապստամբության պատմության լուսաբանման համար կարևոր սկզբնաղբյուր է նաև Իրազելի (Հակոբ Տեր-Հակոբյան) «Մօտիկ անցեալից. պատմական դէպքեր և ապրումներ 1917-1922» հուշագրությունը, որտեղ զգալի տեղ է տրված ապստամբությանը նախորդած ու հաջորդած իրադարձություններին: Լինելով Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ՝ հեղինակն իր հուշագրության մեջ հաղորդում է այնպիսի ուշագրավ մանրամասներ, որոնք բացակայում են այլ աղբյուրներում:

Իր հուշերում փետրվարյան ապստամբությանը նախորդած իրադարձություններին անդրադառնում է նաև Ա. Ստեփանյանը, որը, այն որակելով որպես «համաժողովրդական ապստամբություն», Ա. Վրացյանի նման համարում է ժողովրդական լայն զանգվածների հիասթափության ու ծայրահեղ դժգոհության արդյունք⁵:

Խնդրո առարկայի տեսակետից արժեքավոր են նաև Հայաստանի առաջին Հանրապետության ֆինանսների նախարար Գ. Ջաղեթյանի հուշերը: Ապստամբության պարտությունից հետո Ջանգեզուրով տեղափոխվելով Պարսկաստան՝ հեղինակը դրանք նախ հողվածաշարի ձևով տպագրել է «Ռանջաբ Իրանի» պարբերականի 1922 թ. մի շարք համարներում, ապա մեկ գրքով հրատարակվել է Երևանում⁶: Ուշագրավ է հատկապես այն, որ հուշագիրը հանգամանորեն անդրադառնում է ապստամբության ղեկավարների կողմից Հայաստանից արտահանած տարադրամային և այլ արժեքների ծախսման հաշվետվություններին և Երևանի բանտից Ջանգեզուր տեղափոխված հայ կոմունիստների գնդակահարությանը, որը, ի դեպ, դժգոհություն էր առաջացրել հենց դաշնակցականների շարքերում:

Փետրվարյան ապստամբության պատմության մասին հույժ արժեքավոր փաստեր են պարունակում նաև «Հայրենիք» ամսագրի տարբեր տարիների (1923, 1924, 1925, 1937, 1941, 1950, 1953, 1954, 1956, 1957, 1964, 1965, 1966, 1968) ավելի քան երեսուն համարներում ապստամբու-

⁵ Տե՛ս «Ասլան Ստեփանյանի հուշերը», Թեհրան, 1966:

⁶ Տե՛ս **Գ. Ջաղեթյան**, Մոտիկ անցյալից, Եր., 1969:

թյան մասնակիցների կողմից կամ նրանց անունից հրատարակված հուշերն ու հոդվածները, ինչպես նաև «Վէմ», «Դրօշակ» և այլ հանդեսներում ու թերթերում («Ազատ Հայաստան», «Խորհրդային Հայաստան», «Կոմունիստ», «Հայաստանի կոմունիստ» և այլն) լույս տեսած բազմազան նյութերը:

Դաշնակցական գործիչներից փետրվարյան ապստամբությանը տարբեր առիթներով մասամբ անդրադարձել է նաև Վ. Նավասարդյանը⁷, որը բուլշևիկյան իշխանությունը համարում էր իսկական ստրկատիրություն, այն տարբերությամբ միայն, որ ստրուկները գիտեին, որ իրենք տիրոջը պատկանող իր են, մինչդեռ բուլշևիկներն այդ մասին ոչինչ չէին հայտարարում⁸:

Հայ պատմագրության հիրավի բարձրարժեք նվաճումներից է Է. Վ. Գևորգյանի «Լեռնահայաստանի գոյամարտը (1919-1921)» աշխատությունը⁹, որն աչքի է ընկնում փաստերի առատությամբ և անաչառ վերլուծությամբ: Այնտեղ ամփոփված են 1919-1921 թթ. Լեռնահայաստանում տեղի ունեցած իրադարձությունները, ի մասնավորի՝ Գարեգին Նժդեհի պատմական մեծագույն առաքելության և անօրինակ սխրագործության տարեգրությունը: Ըստ այդմ, ներկայացված են նաև փետրվարյան իրադարձությունները՝ հիմնականում փաստագրական տվյալներով: Չնայած համեմատաբար փոքր ծավալին՝ այն կարևոր ու արժանահավատ աղբյուր է խնդրո առարկա թեմայի ուսումնասիրության համար:

Պատմագիտական լուրջ արժեք ունեն նաև Գ. Լազյանի «Հայաստանը և հայ դատը ըստ դաշնագրերու» (1941 թ.) և «Հայաստանը և հայ դատը: Վավերագրեր» (1946 թ.) աշխատությունները, որոնք հետագայում հիմք են հանդիսացել նրա ծավալուն մեմագրության համար¹⁰: Հեղինակը, հիմնականում կենտրոնանալով Հայաստանի և հայ դատի վրա՝ միաժամանակ վկայակոչում է Ջանգեզուրի գոյամարտին ու փետրվարյան իրադարձություններին առնչվող մինչ այդ չհրապարակված բազմաթիվ սկզբնաղբյուրներ, նորովի մեկնաբանում նախկինում հայտնի փաստաթղթերը:

Փետրվարյան ապստամբությանը հարևանցիորեն անդրադարձել է նաև Եղիա Չուբարը¹¹:

Փետրվարյան ապստամբության պատմության ուսումնասիրության համար արժեքավոր նյութեր ու տեղեկություններ է պարունակում քաղաքացիական կռիվների անմիջական մասնակից, հայկական երկրորդ հրաձգային գնդի հրամանատար Ա. Բաղդասարյանի 1928 թ. հրատարակած գիրքը¹², որտեղ առաջին անգամ ամփոփ ձևով ներկայացված է այդ կռիվների ընդհանուր պատկերը: Աշխատությունը գերազանցապես գրված է ռազմագիտական տեսանկյունից, ուստի նրանում հիմնականում նկա-

⁷ Տե՛ս Վ. Նավասարդյան, ՀՀ դաշնակցության անելիքը, մտքեր և յուշեր, «Յուսաբեր», Գահիրե, 1924:

⁸ Տե՛ս Վ. Նավասարդյան, ՀՀ դաշնակցության «լիկվիդացիան» (բուլշևիզմի սնանկության առթիվ), «Յուսաբեր», Գահիրե, 1924:

⁹ Տե՛ս Է. Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի գոյամարտը (1919-1921), Եր., 1991:

¹⁰ Տե՛ս Գ. Լազյան, Հայաստանը և հայ դատը հայ և ռուս յարաբերություններու լույսին տակ, Եր., 1991:

¹¹ Տե՛ս Եղ. Չուբար, Խորհրդային իշխանության չորս տարվա գործերից, Եր., 1924, նույնի՝ «Նոյեմբերի 29 (հիշողություններ)», Եր., 1925:

¹² Տե՛ս Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական կռիվները Հայաստանում, Եր., 1928:

րագրված են մարտական գործողությունների ընթացքը և մարտնչող կողմերի մարտավարությունը: Գրքում բերված են նաև մի շարք կարևոր փաստաթղթեր: փաստորեն նույն դիրքերից է գրված նաև երկու տարի հետո հեղինակի հրատարակած մյուս աշխատությունը¹³:

Խորհրդային պատմագրության անուրանալի ձեռքբերումներից է նշանավոր բուլշևիկ Բագրատ Բոլյանի ռուսերեն երկհատոր աշխատությունը¹⁴, որի երկրորդ հատորում հեղինակը համառոտակի անդրադարձել է նաև 1921 թ. փետրվարյան ապստամբությանը: Գրքում նշված են ապստամբության դրդապատճառները, ցույց են տրված Հայաստանի հեղկոմի սխալները, շեշտված է, որ նրա կիրառած բռնագրավման քաղաքականությունն է հիմնական պատճառ դարձել հակաբուլշևիկյան շարժման ծավալման, որը հեղինակն անվանում է «ժողովրդական շարժում»:

Հայաստանի առաջին Հանրապետության վերջին և 1921 թ. փետրվարյան ապստամբության շրջանում ՀԶԳ-ի վարած քաղաքականության վերլուծությանն է նվիրված Գ. Չուբարյանի աշխատությունը¹⁵, որտեղ հեղինակը հանդես է եկել խստորեն ընդգծված հակադաշնակցական կեցվածքով. նույնիսկ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի սանձազերծման ողջ պատասխանատվությունը գցում է այդ կուսակցության վրա:

1930 թ. լույս տեսավ քաղաքացիական կռիվների մասնակից Գ. Օզանեզովի «Կարմիր արշավանք» գրքույկը¹⁶: Հետագա տարիներին լույս տեսան նույն հեղինակի պատմական և պատմագեղարվեստական մի շարք գրքեր ու գրքույկներ¹⁷:

1931 թ. հրատարակվեց հայկական դիվիզիայի քաղբաժնի պատրաստած «Ղամարլուից Ձանգեզուր (հիշողություններ Հայաստանի քաղաքացիական կռիվներից)» ակնարկների ժողովածուն, որը կազմել և խմբագրել է Խ. Աբրահամյանը: Ակնարկների հեղինակները Հայաստանում քաղաքացիական կռիվների ակտիվ մասնակիցներ էին՝ ավելի քան 40 զինվորներ, հրամանատարներ, քաղծառայողներ: Ժողովածուի մեջ զետեղված են նաև Ձանգեզուրում կռվող խորհրդային զորամասերին ուղղված 11-րդ բանակի հրամանատարության մի շարք հրամաններ¹⁸:

Նույն թվականին լույս տեսավ Կարմիր բանակի քաղաշխատող Հ. Վարդանյանի գիրքը՝ նվիրված Հայաստանում քաղաքացիական կռիվների տասնամյակին: Այն գրված է ինչպես հուշագրական, այնպես էլ վավերագրական նյութերի հիման վրա: Նրանում թռուցիկ անդադարձ է կատարվել նաև փետրվարյան ապստամբությանը¹⁹:

Փետրվարյան իրադարձությունների պատճառների, բնույթի և հարակից այլ հարցերի անդրադարձել է նաև Շահանը²⁰:

¹³ Տե՛ս **Ա. Բաղդասարյան**, Հայկական դիվիզիայի անցյալից, Եր., 1930:

¹⁴ Տե՛ս **Борьян Б. А.** Армения, международная дипломатия и СССР. Т. 1, М.–Л., 1928, т. 2, М.–Л., 1929:

¹⁵ Տե՛ս **Գ. Չուբարյան**, Դաշնակցության տաճկական օրինտացիան և «Հայրենիքի փրկության կոմիտեն», Եր., 1929:

¹⁶ Տե՛ս **Գ. Օզանեզով**, Կարմիր արշավանք, Եր., 1930:

¹⁷ Տե՛ս **Գ. Օզանեզով**, Ձինվորի օրագրից, Եր., 1956, նույնի, Դիվիզիայի հրամանատար Աբոյան, Եր., 1973, **Оганезов Г.** Воспоминания старого солдата. Ер., 1979:

¹⁸ Տե՛ս «Ղամարլուից -Ձանգեզուր», Եր., 1931:

¹⁹ Տե՛ս **Հ. Վարդանյան**, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Եր., 1931:

²⁰ Տե՛ս **Շահան**, Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930-ի կովկասեան ապստամբու-

1945 թ. Փարիզում լույս տեսավ Արսեն Ժամկոչյանի «Զօրավար Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներուն» աշխատությունը, որտեղ Անդրանիկը հանդես է գալիս հակադաշնակցական դիրքից, մեղադրում է դաշնակցականներին իր անունով արտասահմանից ուղարկված դրամները իրենից բռնությամբ խլելու և Թավրիզ տանելու համար²¹:

Թեմայի ուսումնասիրման համար արժեքավոր է նաև Ա. Զակոբյանի «Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թվին» աշխատությունը²², որտեղ հեղինակը կոնկրետ փաստերի հիման վրա ներկայացնում է Կարմիր բանակի զորամասերի մարտական գործողությունները, Ս. Վրացյանի գլխավորած Փրկության կոմիտեի և Լեռնահայաստանի զորակցությունը Կարմիր բանակի զորամասերի դեմ սղված կռիվներում, Փրկության կոմիտեի կառավարության վարած քաղաքականությունը զանգեզուրյան գոյամարտի վերջին շրջանում:

Նույն հեղինակն իր մեկ այլ աշխատության²³ մեջ այն միտքն է զարգացնում, որ փետրվարյան «ավանտյուրան» սերտորեն շաղկապված էր միջազգային հակախորհրդային ռեակցիայի հետ և վերջինիս դրսևորումներից մեկն էր Անդրկովկասում: Ասենք նաև, որ Ա. Զակոբյանի ուսումնասիրությունը գրված է ընդգծված հակադաշնակցական դիրքերից, ուստի վերջիններս ներկայացված են որպես օտարերկրյա իմպերիալիստների և Թուրքիայի գործակալներ: Այդ տեսակետի համար դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ հեղինակն օգտվել է միայն խորհրդային արխիվներից ու գիտական աշխատություններից:

Ա. Զակոբյանն առանձին աշխատություն²⁴ է գրել նաև 1921 թ. փետրվարյան ապստամբության մասին, որը նա որակում է որպես «ավանտյուրա», ուստի ակնհայտորեն փառաբանում է այն ճնշելու համար բոլշևիկյան ղեկավարության ձեռնարկած գործողությունները, իսկ ապստամբության ճնշումը դիտում Հայաստանի և հայ գյուղացիների հերոսական պայքարի փայլուն էջերից մեկը:

Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվները ուսումնասիրել է Ա. Վարդապետյանը, որը, ներկայացնելով 1920 թ. հուլիս-1921 թ. հուլիս ընկած ժամանակահատվածում 11-րդ Կարմիր բանակի ռազմական գործողությունները Ձանգեզուրում, հիմնական գծերով նկարագրել է նաև փետրվարյան ապստամբության ընթացքը: Հարկ է նշել սակայն, որ նրա աշխատության մեջ տեղ են գտել փաստական անճշտություններ, աղավաղված տեղանուններ և անձնանուններ, իսկ առաջաբանում անհարկի թերագնահատված են նախորդ հեղինակների կատարած աշխատանքները²⁵:

թիւնները, հ. Ա., Սարսեյլ, 1934, նույնի՝ «Երևանի համաձայնագիրը», Բոստոն, 1941:

²¹ Տե՛ս Ա. Ժամկոչեան, Զօրավար Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներուն, Փարիզ, 1945:

²² Տե՛ս Ա. Զակոբյան, Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թվին, Եր., 1948:

²³ Տե՛ս Ա. Զակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925), Եր., 1955:

²⁴ Տե՛ս Ա. Զակոբյան, Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում, Եր., 1960:

²⁵ Տե՛ս Ա. Վարդապետյան, Հայաստանի Կարմիր բանակը քաղաքացիական կռիվներում 1920-1921 թթ., Եր., 1960:

Հայաստանում խորհրդային իշխանության համար մղված պայքարին Ռուսաստանի ցուցաբերած օգնությանը, ինչպես նաև Հայաստանի Կարմիր բանակի կազմավորմանն է նվիրված Ա. Վարդապետյանի մեկ ուրիշ աշխատությունը²⁶, որտեղ ընդգծված հակադաշնակցական դիրքերից անդրադարձ է կատարվել նաև քաղաքացիական կռիվներին:

Հայաստանում խորհրդային իշխանության համար մղված պայքարին է նվիրված նաև Գևորգ Ղարիբջանյանի աշխատությունը²⁷, որտեղ զգալի տեղ է հատկացված ինչպես 1920-1921 թթ. Ջանգեզուրի կռիվներին, այնպես էլ տեղի բոլշևիկների ընդհատակյա գործունեությանը, քաղաքացիական կռիվներում նրանց կորուստներին, պատերազմական գործողությունների ընթացքում լեռնաշխարհի գյուղացիների կրած տառապանքներին:

1921 թ. Հայաստանում ծավալված քաղաքացիական կռիվներին Ծատուր Աղայանն անդրադարձել է իր «Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը»²⁸ մենագրությունում, որտեղ գիտական շրջանառության մեջ է դրել արխիվային մի շարք նյութեր:

Ս. Սողոմոնյանը «Քաղաքացիական կռիվները Ջանգեզուրում 1920-1921 թթ.»²⁹ աշխատության մեջ թեև փետրվարյան իրադարձությունները որակում է որպես «ավանտյուրա», բայց և այնպես հարկ է նշել, որ տվյալ թեմայով լույս տեսած աշխատությունների թվում նրա մենագրությունը շահեկանորեն առանձնանում է բազմազան աղբյուրների լայն օգտագործմամբ: Գրքում բերված տվյալները հավաստի են և համապատասխանում են արխիվային նյութերին: Մեր պատմագրության մեջ հեղինակն առաջիններից է, որ ներկայացրել է Ջանգեզուրում կռվող Կարմիր բանակի զորամասերի կառուցվածքը, զենքերի տեսակները, անձնակազմի թիվը, զորամասերի մարտական գործողությունների ուղղությունները:

1958 թ. և 1961 թ. լույս տեսած «Հին բոլշևիկների հիշողությունները» գրքի երկու հատորներում պատմական դեպքերը և դեմքերը նկարագրված են խիստ սուբյեկտիվ դիրքերից, ուստի հազիվ թե դրանք կարելի է համարել սկզբնաղբյուր կամ գիտական ուսումնասիրություն³⁰:

Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությանը նվիրված իր աշխատության³¹ մեջ Ջ. Գրիգորյանը փետրվարյան իրադարձությունները որակում է և՛ որպես «հակահեղափոխական ավանտյուրա», և՛ «որպես դաշնակների փետրվարյան ավանտյուրա», և՛ «որպես քաղաքացիական կռիվներ», որոնք, ըստ հեղինակի, կազմակերպել էին դաշնակցականները օտարերկրյա ինպերիալիստների աջակցությամբ:

²⁶ Տե՛ս Ա. Վարդապետյան, Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին 1920-1925 թթ., Եր., 1959:

²⁷ Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հարթանակի համար մղված պայքարում, Եր., 1955:

²⁸ Տե՛ս Ծ. Աղայան, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Եր., 1957:

²⁹ Տե՛ս Ս. Սողոմոնյան, Քաղաքացիական կռիվները Ջանգեզուրում 1920-1921 թթ., Եր., 1958:

³⁰ Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք 1, Եր., 1958, գիրք 2, Եր., 1961:

³¹ Տե՛ս Ջ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Եր., 1960:

Խնդրո առարկա թեմային անդրադարձել են նաև ռուս հետազոտողներ, որոնցից Ա. Կադիշևը իր աշխատություններից մեկում³² հանգամանակից ներկայացնում է Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատման համար մղված պայքարը 1917-1919 թթ.: Իրավացիորեն փաստելով, որ տվյալ ժամանակաշրջանում Անդրկովկասը հանդիսանում էր ռազմական գործողությունների յուրահատուկ թատերաբեմ, հեղինակն այնուհետև նկարագրում է Զոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված իրավիճակը, անդրադառնում է գերմանա-թուրքական ինտերվենցիային և թուրքերի ներխուժմանը Անդրկովկաս: Կադիշևը իր աշխատության մեջ զգալի տեղ է հատկացրել նաև փետրվարյան ապստամբությանը՝ որակելով այն որպես «դաշնակցության ավանտյուրա»:

1920-1921 թթ. Անդրկովկասում 11-րդ Կարմիր բանակի ռազմական գործողություններին է նվիրված Մարկ Տրասկունովի գիրքը³³, որտեղ հեղինակը նկարագրել է նաև Զայաստանում խորհրդային իշխանության հաստատման համար Կարմիր բանակի մղած կռիվները, ներկայացրել 1921 թ. քաղաքացիական կռիվներում նրա խաղացած դերը:

Հիմնականում Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Բաքվի, Երևանի, Պոդոլսկի արխիվներից քաղած նյութերի հիման վրա Ա. Մնացականյանը իր մենագրություններից մեկում³⁴ ցույց է տալիս Ռուսաստանի ցուցաբերած աջակցությունը Անդրկովկասում խորհրդային իշխանության համար պայքարող ուժերին: Հեղինակն առաջարկում է այն տեսակետը, որ իբր դաշնակցականները ղեկտեմբերի 2-ի համաձայնագրով ընդամենը ժամանակ են շահել՝ հետագայում կազմակերպված պայքարի դուրս գալու համար:

Հակադաշնակցական ընդգծված կողմնակալությամբ և գիտական աշխատանքին անհարիր պիտակավորումներով զրկված իր մեկ այլ աշխատության մեջ³⁵ Ա. Մնացականյանը ներկայացնում է փետրվարյան իրադարձությունների պատճառները, բնույթը, նպատակները, խորհրդային իշխանության առաջին տարիներին Զայաստանի կյանքում կատարված քաղաքական ու սոցիալ-տնտեսական վերափոխությունները:

Խորհրդահայ պատմաբաններից Ս. Կարապետյանը իր «1920 թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Զայաստանը» աշխատության³⁶ մեջ փորձել է ճշմարիտ ներկայացնել 1920 թ. թուրք - հայկական պատերազմի ընթացքը, տալ Զայաստանի հանդեպ քեմալական զավթիչների վարած մարդատյաց քաղաքականության օբյեկտիվ գնահատականը: Հեղինակը հիմնական գծերով ներկայացրել է նաև 1921 թ. փետրվարյան իրադարձությունները:

Անդրկովկասում և Զայաստանում 1917-1921 թթ. ծավալված իրադարձությունների լուսաբանմանն է նվիրված Ս. Ալիխանյանի աշխատությունը³⁷, որտեղ ներկայացված են այդ ժամանակաշրջանում ռուս-հայկական

³² Տե՛ս **Кадисев А.** Интервенция и гражданская война в Закавказье. М., 1960:

³³ Տե՛ս **Траскунов М.** Кавказская красноармейская. Тбилиси, 1961.

³⁴ Տե՛ս **Ա. Մնացականյան**, Ռուսլուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները (1917-1921), Եր., 1961:

³⁵ Տե՛ս **Ա. Մնացականյան**, Ընդդեմ պատմության դաշնակցական մենագիտության, Եր., 1976:

³⁶ Տե՛ս **Ս. Կարապետյան**, 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Եր., 1965:

³⁷ Տե՛ս **Ս. Ալիխանյան**, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Եր., 1966:

հարաբերությունները, Հայաստանի խորհրդայնացման գործում բուլշևիկյան կուսակցության և խորհրդային Կարմիր բանակի խաղացած դերը: Ձգալի տեղ է հատկացված 1920-1921 թթ. Ջանգեզուրում ծավալված կռիվներին, 1920 թ. հայ-ռուսական համաձայնագրին, ինչպես նաև 1921 թ. փետրվարյան ապստամբությանը, որը հեղինակը որակում է որպես դաշնակցականների կողմից կազմակերպված «ավանտյուրա»: Այն խորհրդահայ մյուս աշխատությունների նման գրված է հակադաշնակցական դիրքերից, ուստի վերջիններս մեղադրվում են Հեղկոմի սիրալիր վերաբերմունքը չարաշահելու համար, իսկ դաշնակցականների նկատմամբ կիրառված բռնությունները դիտվում են որպես նախապատրաստվող ավանտյուրայի կանխարգելիչ միջոց: Այս ամենով հանդերձ՝ գիրքը բավականին ուշագրավ է և կարևոր հիմնախնդրի ուսումնասիրման համար:

Հեղինակը մեկ այլ աշխատությամբ³⁸ ներկայացրել է ՌԿ(Բ)Կ Կենտրոնական կոմիտեի կովկասյան բյուրոյի նախագահ Օրջոնոկիձեի խաղացած դերը Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման և ամրապնդման համար մղված պայքարում, ինչպես նաև Օրջոնոկիձեի դերը «փետրվարյան ավանտյուրայի» ջախջախման գործում:

Փետրվարյան իրադարձություններին Ա. Եսայանն անդրադարձել է 1920-1922 թվականներին Հայաստանի միջազգային-իրավական դրությանը նվիրված ուշագրավ աշխատության³⁹ մեջ, որտեղ հանգամանորեն ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Գերմանիայի, Անդրկովկասի հարևանների, Անտանտի տերությունների, ԱՄՆ-ի և խորհրդային Ռուսաստանի հետ: Անողորք և երբեմն անհարկի քննադատելով Առաջին հանրապետության կառավարության «արատավոր» քաղաքականությունը՝ հեղինակը դրա հետևանք է համարում Հայաստանի վերածումը «Անտանտի հակասովետական գործունեության բազայի»: Միևնույն ժամանակ նա Հայաստանի առաջին Հանրապետության կառավարությանը վերագրում է ԱՄՆ-ի և Անտանտի «գործակատարի դեր», որը մինչև վերջ հավատարիմ մնաց հայ ժողովրդի կենսական շահերի դեմ ուղղված «հանցավոր» քաղաքականությանը, որի արդյունքում Հայաստանը հասցրեց «կործանման եզրին և երես թեքեց ամենաճակատագրական պահին թուրքական ագրեսիայի ժամանակ»: Չնայած այս և համանման այլ կանխակալ ու միակողմանի գնահատականներին, այնուամենայնիվ Ա. Եսայանի մեմագրությունը կարելի է գնահատել որպես միջազգային իրավունքի տեսության շրջանակներում հայ պատմաիրավագիտական մտքի կարևոր նվաճում:

Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի նախագահ Շավարշ Ամիրխանյանը հուլիսագրական բնույթի իր գրքում⁴⁰ փորձել է հանգամանորեն նկարագրել 1921 թ. փետրվարյան ապստամբությունից հետո Հայաստանում ստեղծված իրավիճակը, Վայոց ձորում և Ջանգեզուրում Լեռնահա-

³⁸ Տե՛ս **Ս. Ալիխանյան**, Գ. Կ. Օրջոնոկիձեի և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, Եր., 1974:

³⁹ Տե՛ս **Ա. Եսայան**, Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920-22 թթ., Եր., 1967:

⁴⁰ Տե՛ս **Ամիրխանյան Ս.** Из истории борьбы за советскую власть в Армении. Ер., 1967:

յաստանի պաշտպանների դեմ Կարմիր բանակի զորամասերի իրականացրած մարտական գործողությունները: Գրքի հիմքում հիմնականում ընկած են, իհարկե, հեղինակի սեփական հիշողությունները, որոնք նա գրի է առել դեպքերից տասնամյակներ անց: Ճիշտ է, Շ. Ամիրխանյանն ըստ կարելիության օգտագործել է նաև արխիվային փաստաթղթեր և այլ ականատեսների հիշողություններ, բայց և այնպես չկարողանալով քիչ թե շատ հաղթահարել կուսակցական ու դեպքերին անմիջական մասնակցի անձնական սուբյեկտիվիզմը՝ պատմական դեպքերն ու իրողությունները ներկայացնում է խիստ կողմնակալ ու կանխակալ դիրքերից: Ասվածի վկայություն է թեկուզ այն, որ Շ. Ամիրխանյանը 1921 թ. փետրվարյան իրադարձությունները բնորոշում է որպես դաշնակների կողմից կազմակերպված արկածախնդրություն-ավանտյուրա, իսկ միակ բանը, որում մեղադրում է բուլշևիկներին, այն է, որ իբր վերջիններս, շատ միամիտ ու անփորձ լինելով, վստահել են դաշնակցականներին:

Խորհրդահայ պատմաբաններից նաև Ս. Սահրադյանը, իր աշխատության⁴¹ մեջ ներկայացնելով ռազմահեղափոխական կոմիտեների գործունեությունը Խորհրդային Չայաստանում, անդրադարձել է նաև փետրվարյան իրադարձություններին և դրանք որակել որպես ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստների թելադրանքով ու քեմալական թուրքիայի և մենչևիկյան Վրաստանի օգնությամբ ծագած քաղաքացիական կռիվներ: Ճիշտ է, գիրքը գրված է հակադաշնակցական դիրքերից, բայց, այդուհանդերձ, հետաքրքիր նյութեր է պարունակում քաղաքացիական կռիվների ընթացքում ռազմահեղափոխական կոմիտեների ծավալած գործունեության մասին:

Ավետիս Եափուճյանն իր աշխատություններից մեկում⁴² անգիջում հակադաշնակցական դիրքերից խիստ քննադատության է ենթարկել 1921 թ. փետրվարյան ապստամբությունը, դրա կազմակերպիչներին ու ղեկավարներին, վերլուծել ապստամբության ծանր հետևանքները, ներկայացրել թուրքերի հետ համագործակցության հասնելու Ս. Վրացյանի և նրա գլխավորած Փրկության կոմիտեի գործադրած ջանքերը, նկարագրել ապստամբության պարտությունից հետո դեպի Ջանգեզուր գնացող հազարավոր գաղթողների անասելի տառապանքները:

Արխիվային բազմաթիվ փաստաթղթերի հիման վրա գրած իր գրքում⁴³ Իվան Թաիրյանը, ներկայացնելով Չայաստանում խորհրդային կարգերի հաստատման և ամրապնդման համար մղված պայքարում 11-րդ Կարմիր բանակի խաղացած դերը, հանգամանորեն անդրադարձել է նաև փետրվարյան ապստամբությանը: Հեղինակը գտնում է, որ առանց Կարմիր բանակի միջամտության հնարավոր չէր լինի խորհրդային կարգերի հաստատումը Չայաստանում, այդ թվում՝ Ջանգեզուրում, որ քայքայված տնտեսության առկայության պայմաններում ստեղծված ռազմաքաղաքական ծանր իրավիճակից դուրս գալու միակ ելքը երկրի խորհրդայնացումն էր:

⁴¹ Տե՛ս **Ս. Սահրադյան**, Ռազմառևոլյուցիոն կոմիտեները Չայաստանում, Եր., 1967:

⁴² Տե՛ս **Ա. Եափուճյան**, Ո՞վ կազմակերպեց փետրուարեան արկածախնդրությունը և ի՞նչ եղաւ անոր հետևանքը, Գահիրե, 1969:

⁴³ Տե՛ս **Таирян И.** XI Красная Армия в борьбе за установление и упрочение советской власти в Армении. Ер., 1971:

Խիստ հակադաշնակցական դիրքերից է գրված նաև Բ. Օհանջանյանի աշխատությունը⁴⁴, որը իր գրքի «Կատաղած գազանի հետքերը» գլխում անդրադառնալով փետրվարյան ապստամբությանը, դաշնակցության գործունեությունը ներկայացնում է ամենամռայլ գույներով, իսկ դաշնակցական գործիչներին՝ անհարկի պիտակավորումներով:

Խնդրո առարկա թեմային իր հուշերում անդրադարձել է նաև հայ նշանավոր զորապետ, Խորհրդային Միության մարշալ Յուլի. Բաղրամյանը⁴⁵: Իբրև դեպքերի անմիջական ականատես՝ հեղինակը դրանք նկարագրում է հակադաշնակցական դիրքերից: Նա գովերգում է բուլշևիկյան իշխանությունը, բացառապես դրական գույներով ներկայացնում Յեղկոմի իրականացրած քաղաքականությունը Յայաստանում: Հարկ է նշել նաև, որ աշխատությունը գրելու համար հեղինակը օգտագործել է արխիվային բազմաթիվ վավերագրեր և մի շարք աշխատություններ:

Է. Ջոհրաբյանը իր արժեքավար մենագրության մեջ⁴⁶ վերլուծում է քեմալական շարժումը և հայ-թուրքական հարաբերությունները Յայաստանում սովետական իշխանության հաստատման նախօրյակին, ներկայացնում Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցը Յայաստանում սովետական իշխանության գոյության առաջին ամիսներին (1920 թ. նոյեմբեր- 1921 թ. ապրիլ), Մոսկվայի և Կարսի պայմանագրերը: Աշխատությունը ընդհանուր առմամբ գրված է հակադաշնակցական դիրքերից: Սակայն պետք է նշել, որ Է. Ջոհրաբյանը խորհրդահայ պատմաբաններից առաջինն է, որ պատմական փաստերի ժամանակագրական օբյեկտիվ մեկնաբանությամբ ցույց է տվել, որ 1921 թ. մարտի 12-ին Սիմոն Վրացյանի արած հայտնի ռադիոհայտարարությունը չէր կարող հետադարձ ազդեցություն ունենալ փետրվարի 26-ին Յայաստանի պատվիրակության՝ Մոսկվայի բանակցություններին չմասնակցելու հանգամանքի վրա: Այս առնչությամբ պատմաբանը իրավացիորեն կատարում է հակադարձ հարցադրում. իսկ ինչո՞ւ մերժվեց այդ բանակցություններին Ադրբեջանի պատվիրակության մասնակցությունը:

1982 թ. հրատարակված աշխատության⁴⁷ մեջ Գ. Գալոյանը, թռուցիկ անդրադարձ կատարելով փետրվարյան իրադարձություններին, աներկբա գրում է, որ «դաշնակցականների ազգադավ քաղաքականության» հետևանքով Արևելյան Յայաստանի տարածքի մի զգալի մասը, այդ թվում՝ Կարսը, Արդահանը մնացին Թուրքիայի սահմաններում:

Ա. Լալայանը, իր գրքույկի⁴⁸ հիմքում դնելով 1917-1921 թթ. Ջանգեզուրում տեղի ունեցած դեպքերի մասին իր հուշերը, թեև օգտագործել է նաև արխիվային մի շարք նյութեր, այնուամենայնիվ խորհրդահայ շատ պատմաբանների նման փետրվարյան իրադարձությունները նույնպես բնորոշել է որպես «ավանտյուրա»: Ավելին, նրանում տեղ են գտել նաև փաստագրական և այլ կարգի սխալներ, որոնց պատճառով այն չի կարելի համարել վստահելի աղբյուր:

⁴⁴ Տե՛ս Բ. Օհանջանյան, Դաշնակցությունը առանց դիմակի, Եր., 1978:

⁴⁵ Տե՛ս Баграмян И. X. Мои воспоминания. Ер., 1979:

⁴⁶ Տե՛ս Է. Ջոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Եր., 1979:

⁴⁷ Տե՛ս Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, Եր., 1982:

⁴⁸ Տե՛ս Ա. Լալայան, Ջանգեզուրյան դրվագներ 1917-1921 թթ., Եր., 1985:

Փետրվարյան ապստամբությանը թռուցիկ անդրադարձել է նաև Յ. Սիմոնյանը⁴⁹, որը պատմական իրադարձությունների համապատկերում բացահայտում է թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը կազմող հայացքների և դրանց վրա խարսխված քաղաքականության էությունը: Նրա աշխատությունն ընդգրկում է XIX դարի 50-ական թվականներից մինչև XX դարի 20-ական թթ. ընկած ժամանակահատվածը: Հեղինակը, անդրադառնալով 1921 թ. Մոսկվայի պայմանագրին, նշում է, որ դաշնակցության բարձրացրած խռովության, ի մասնավորի՝ Սիմոն Վրացյանի՝ Մոսկվա ուղարկած հեռագրի պատճառով հայ պատվիրակը չկարողացավ մասնակցել խորհրդատուական, որը հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցավ: Սակայն, կարծում ենք, որ վիճելի է հեղինակի նման տեսակետը, քանզի հայտնի է, որ Սիմոն Վրացյանի ռադիոգիր-հեռագիրն ուղարկվել է մարտի 12-ին, երբ ռուս-թուրքական խորհրդատուական մտել էր եզրափակիչ փուլ, իսկ հայ պատվիրակների մասնակցությունը խորհրդատուական արգելվել էր դեռևս փետրվարի 26-ից:

Քանի որ Բ. Խուղավերդյանի հետազոտությունը⁵⁰ նվիրված է Ջանգեզուրի՝ 1917-1921 թվականների իրադարձությունների լուսաբանմանը, բնականաբար, այնտեղ անդրադարձ է կատարվել նաև 1921 թ. փետրվարյան իրադարձություններին, որոնք հեղինակը որակում է մեկ որպես «փետրվարյան խռովություն», մեկ որպես արկածախնդրություն: Բ. Խուղավերդյանի կարծիքով, փետրվարյան խռովությունը նախապես կանխամտածված գործողություն էր, որի նպատակն էր առաջացնել հակահեղափոխական շարժում ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Կովկասում: Իսկ նույն ժամանակներում Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունները նույնպես համարում է փետրվարյան արկածախնդրության բաղկացուցիչ մաս:

Խորհրդահայ պատմաբաններից խնդրին այս կամ այն չափով անդրադարձել է նաև Մ. Արզումանյանը⁵¹:

1988 թ. սկսած Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման վերելքի և հայության ազգային զարթոնքի մթնոլորտում իրավացիորեն մեծացավ գիտնականների հետաքրքրությունը 1921 թ. փետրվարյան ապստամբության պատմության հանդեպ: Խնդիր դրվեց նորովի լուսաբանելու փետրվարյան իրադարձությունների պատմությունը: Ճիշտ է, մինչև օրս փետրվարյան ապստամբության մասին չի ստեղծվել մենագրական ամբողջական հետազոտություն, բայց և այնպես այդ իրադարձություններին տարբեր առիթներով անդրադառնում են պատմաբաններից շատերը:

Օրինակ, Յ. Տասնապետյանը, լուսաբանելով 1890-1924 թթ. դաշնակցության պատմությունը⁵², բնականաբար ներկայացրել է նաև դաշնակցականների և բոլշևիկների հարաբերությունները, անդրադարձել փետրվարյան իրադարձություններին՝ որակելով դրանք ժողովրդական ապստամբու-

⁴⁹ Տե՛ս Յ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986:

⁵⁰ Տե՛ս Բ. Խուղավերդյան, Ջանգեզուր (1917-1921), Եր., 1988:

⁵¹ Տե՛ս Մ. Արզումանյան, Դարավոր գոյամարտ, Եր., 1989:

⁵² Տե՛ս Յ. Տասնապետյան, ՀՀ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ ընդհանուր ժողով (1890-1924), Աթենք, 1988:

թյուն: Թեն Յ. Տասնապետյանն առանձնապես չի խորացել խնդրի ուսումնասիրության մեջ, իսկ որոշ դեպքերում նույնիսկ նկատելի է հակիրճություն, ընդամին բոլոր հարցերը դիտարկել է զուտ դաշնակցության գաղափարախոսության դիրքերից, այնուամենայնիվ նրա գիրքն ամբողջության մեջ արժեքավոր է, քանզի պարունակում է փաստական հարուստ նյութ:

Ռ. Փիրումյանը, Առաջին համաշխարհային պատերազմի, ռուսական հեղափոխության և միջազգային բարդ հարաբերությունների լույսի ներքո քննության առնելով բուլշևիկ-դաշնակցություն կուսակցությունների փոխհարաբերությունները և դրանց ազդեցությունը Հայաստանի անկախ պետականության գոյատևման վրա, անդրադարձել է նաև 1921 թ. փետրվարյան իրադարձություններին՝ որակելով դրանք խորհրդային իշխանության դեմ ուղղված զանգվածային ապստամբություն: Այնուհանդերձ հարկ է նշել, որ նյութը ներկայացված է ուրույն ձևով, պատճառաբանված մեկնաբանություններով և ինքնատիպ ոճով⁵³:

1999 թ. լույս տեսած աշխատության⁵⁴ մեջ Գ. Գալոյանը, անդրադառնալով փետրվարյան իրադարձություններին, դրանք որակել է որպես հակախորհրդային խռովություն:

Հետխորհրդային պատմագրության մեջ խնդրո առարկայի ուսումնասիրման է նվիրված Ա. Սիմոնյանի արժեքավոր աշխատությունը⁵⁵, որում հեղինակն առաջնորդվել է պատմական երևույթները, դեպքերն ու դեմքերը գնահատելու պատմաքննական մեթոդով՝ տալով այդ իրադարձությունների հնարավորինս անկողմնակալ վերլուծություն: Իսկ որ շատ կարևոր է, խուսափել է գործող ուժերին անհարկի պիտակներ կպցնելուց, «թշնամի» կամ «բարեկամ» որակելուց:

Վ. Ղազախեցյանը սկզբնաղբյուրների նյութերի հիման վրա գրված աշխատության⁵⁶ մեջ հիմնականում լուսաբանում է Գարեգին Նժդեհի գլխավորությամբ Ջանգեզուրում ծավալված իրադարձությունների այն ժամանակահատվածը, երբ Հայաստանը դարձավ խորհրդային, և վերջինիս առջև ծառայած երկրամասը իրեն միացնելու խնդիրը: Հեղինակը զարգացրել է այն տեսակետը, որ Ջանգեզուրի հերոսամարտերը և փետրվարյան ապստամբությունը փոխազդել են մեկը մյուսի վրա:

Վ. Ղազախեցյանը 1921 թ. փետրվարյան ապստամբությանն անդրադարձել է նաև իր մեկ այլ աշխատության⁵⁷ մեջ՝ օգտվելով արխիվային հարուստ նյութերից և հրապարակի վրա առկա գրականությունից:

1921 թ. փետրվարյան իրադարձություններին թռուցիկ անդրադարձ է կատարել նաև Ա. Ներսիսյանը՝ ներկայացնելով դրանք որպես համաժողովրդական ապստամբություն, որը, ըստ հեղինակի, փրկեց հայ մտավորականության ու քաղաքական ղեկավարության «ծաղկին» արմատախիլ լինելուց⁵⁸:

⁵³ Տեն Ռ. Փիրումյան, Հայաստանը ՀՅԴ-բուլշևիկ յարաբերությունների ոլորտում (1917-1921), Եր., 1997:

⁵⁴ Տեն Գ. Գալոյան, Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թ թ., Եր., 1999:

⁵⁵ Տեն Ա. Սիմոնյան, Ջանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Եր., 2000:

⁵⁶ Տեն Վ. Ղազախեցյան, Նժդեհը Ջանգեզուրում. 1920 թ. վերջ-1921 թ. հուլիս, Եր., 2001:

⁵⁷ Տեն Վ. Ղազախեցյան, Հայաստանը 1920-1940 թթ., Ա հ., Եր., 2006:

⁵⁸ Տեն Ա. Ներսիսյան, Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ), Եր., 2003:

Ա. Ներսիսյանի մյուս աշխատությունը նվիրված է XX դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի, Դաշնակցության, փետրվարյան ապստամբության կազմակերպիչներից և ակտիվ մասնակիցներից մեկի՝ սփյուքահայ հասարակական-քաղաքական և մշակութային նշանավոր գործիչ Կարո Սասունու կյանքի ու գործունեության լուսաբանմանը, որը, փաստորեն, այդ տեսակետից, առաջին փորձն է⁵⁹:

Մենագրական հետազոտության նյութ դարձնելով 1920-1922 թթ. հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը⁶⁰, Կ. Խաչատրյանը այն ուսումնասիրել է արխիվային բազմաբնույթ փաստաթղթերի և վավերագրերի, մամուլի հրապարակումների, թեմային առնչվող պատմագիտական գրականության հիման վրա և նորովի լուսաբանել Հայաստանի խորհրդայնացման, 1921 թ. փետրվարյան ապստամբության, Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի ռազմաքաղաքական, միջպետական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության հիմնախնդիրները՝ դրանք ներկայացնելով տարածաշրջանի, ինչպես նաև Հայաստանի և Ռուսաստանի 1920-1922 թթ. պատմության համապատկերում: Ի մասնավորի անդրադառնալով 1921 թ. փետրվարյան իրադարձություններին՝ հեղինակը ցույց է տալիս, որ Խորհրդային Հայաստանում իշխանության առաջին ամիսներին հայ բուլշևիկները մեխանիկորեն կրկնեցին Խորհրդային Ռուսաստանում 1918-1920 թթ. բուլշևիկների կիրառած կառավարման ձևերը և փորձեցին իրականացնել նույն քաղաքականությունը: Հենց դա էլ պատճառ դարձավ ներքաղաքական իրադրության այնպիսի սրման, որ խորհրդայնացումից ընդամենը երկուսուկես ամիս անց երկրում բռնկվեց փետրվարյան ապստամբությունը: Ըստ հեղինակի՝ փետրվարյան ապստամբության պարտությունը և Հայաստանում խորհրդային իշխանության վերահաստատումը անխուսափելի էին, որովհետև խորհրդային իշխանության զուլփ կանգնած էր խորհրդային Կարմիր բանակը:

Փետրվարյան ապստամբությանը իրենց աշխատություններում տարբեր առիթներով ու տարբեր չափով անդրադարձել են նաև Մ. Կարապետյանը և Է. Գևորգյանը⁶¹, Է. Ջոհրաբյանը⁶², Հ. Գևորգյանը⁶³, Է. Հովհաննիսյանը⁶⁴ և ուրիշներ:

Ամփոփելով, կարծում են, կարող ենք եզրակացնել, որ հայոց պատմության կարևորագույն իրադարձություններից մեկի՝ 1921 թ. փետրվարյան ապստամբության պատմության գիտական համակողմանի անաչառ ուսումնասիրության ուղղությամբ առայժմ արվել են ընդամենը առաջին քայլերը: Հոլանք, որ ապագայում կունենանք այդ իրադարձությանն առնչվող պատմական փաստերի, դեպքերի ու դեմքերի անկողմնակալ վերլուծություն և գիտական գնահատություն, քանզի դա ոչ միայն զուտ պատմագիտական, այլև գործնական-քաղաքագիտական հույժ կարևոր խնդիր է:

⁵⁹ Տե՛ս Ա. Ներսիսյան, Կարո Սասունի, Եր., 2004:

⁶⁰ Տե՛ս Կ. Խաչատրյան, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., 2007:

⁶¹ Տե՛ս Մ. Կարապետյան, Է. Գևորգյան, Խորհրդային Հայաստանը 1920-1991 թթ., Եր., 2007:

⁶² Տե՛ս Է. Ջոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921), Եր., 2010:

⁶³ Տե՛ս Հ. Գևորգյան, Դրո, Եր., 2007:

⁶⁴ Տե՛ս Оганесян Э. Век борьбы. Т. I. Мюнхен–Москва, 1991:

НАТЕЛЛА ГРИГОРЯН – К вопросу об изучении февральского восстания 1921 г. – Оценка причин, характера и подготовки февральских (1921) событий, а также другие смежные с этими вопросы – одна из наиболее спорных проблем новейшей армянской истории. Богатая литература, возникшая в результате её исследования, базируется на разноречивых точках зрения. Советская историография придерживалась мнения, что восстание подготовил Армянский революционный союз («Дашнакцутюн»), дабы свергнуть режим, не соответствовавший его теориям и планам. Что касается сложившейся в диаспоре дашнакской историографии, она склонялась к выводу, что восстание вспыхнуло стихийно вследствие проводимой советской властью политики насилия и ограбления трудящихся масс. В статье обстоятельно проанализированы многообразные материалы, причастные к проблеме: архивные фонды и документы, печатные источники, декреты, статистические сводки, приказы государственных и партийных деятелей советской Армении и России, произнесённые ими речи, их мемуары и труды, письма и доклады, а кроме того, статьи и выступления видных революционеров, воспоминания деятелей Первой республики и участников восстания, исследования советского и постсоветского периода.

NATELLA GRIGORYAN – On Estimation of the February Revolt in 1921. – The estimation of causes, nature, preparation and other related issues of the 1921 February Revolt is one of the most disputable issues of Armenian contemporary history, an issue, the study of which resulted in the creation of rich literature, is based on controversial views. Soviet Armenian historiography supports the view that the rebellion was prepared by the Armenian Revolutionary Federation in order to overthrow the regime inappropriate to its ideas and platform. As for the historiography, the revolutionary federation, which was predominantly created in the Diaspora, was inclined to believe that the February uprising occurred spontaneously and was the result of the newly established Soviet government's policy of repression and plundering of the working masses. The rich materials available for the study that is archival funds, archival documents, ratifications, published printed original sources, decrees, documentary and statistical material collections, the orders of the famous political figures and party leaders of Soviet Armenia and Russia, their speeches, memoirs, works, collections of letters and reports, the articles and speeches of prominent revolutionaries, the memoirs and works of the participants of the rebellion and the famous figures of the First Republic of Armenia, works written in the Soviet and post-Soviet period are thoroughly discussed in the article.